ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<12>> հունվարի 2015թ. N 02 - Ա

ք. Արմավիր

ՍԻԼՎԱՐԴ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻՆ <<ԱԿՆԱԼՃԻ ԱՐԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի երրորդ մասի <<բ>> ենթակետով, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 83-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 4-ի N 1355-Ա որոշմամբ, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի 2014 թվականի դեկտեմբերի 25-ի զեկուցագիրը, <<Ակնալճի Արա Հարությունյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Սիլվարդ Թադևոսյանի հետ 2011 թվականի նոյեմբերի 28-ին կնքված N 206 աշխատանքային պայմանագրի 4.1-րդ կետի <<դ>> ենթակետը և 2014 թվականի դեկտեմբերի 15-ի ծանուցագիրը.

որոշում եմ՝

1. 65 տարին լրանալու կապակցությամբ <<Ակնալճի Արա Հարությունյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Սիլվարդ Թադևոսյանի հետ 2011 թվականի նոյեմբերի 28-ին կնքված N 206 աշխատանքային պայմանագիրը 2015 թվականի հունվարի 12-ից համարել լուծված:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ **Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ**